

— Տիկին, ձեր հիւրընկալութիւնն անգին է, ես այսպիսի զուարճութեան դեռ չէի հանդիպած, բայց ո՞վ է այդ նորահրաշ աչքերով աղջիկը, որուն նմանը չեմ տեսեր՝ եւ որ այնչափ լաւ կը պարէ:

— Դա որք, անտերունջ օտար աղջիկ մ'է, արքայորդի:

— Բայց ուստի՛ ձեր ձեռքն է ընկեր այդ հրաշալի ծաղիկը:

— Քանի մը տարի առաջ ինձ ընծայ ըրին, երբ փոքր էր: Կը ջանամ դաստիարակել, բայց չէք կրնար երեւակայել թէ ինչ դժուարութիւն կը քաշեմ այդ բնութիւնը ճնշելու: Կ'երեւայ թէ իր լեռներուն ազատութեան վարժած եւ վայրենի ազնուականաց սերունդ, ամէն բանի արհամարհոտ եւ անտարբեր կակնարկէ:

— Եթէ դուք նաեւ չի կարենաք, ո՛վ կրնայ գինք ընտելացնել,— ըսաւ պատանին, տիկնոջ ձեռքը շողոքորթութեամբ բռնելով:

Իսկ Տիկինը իւր լուրջ հրամայական կերպն առնելով՝ երբ կաթաւը վայրկեան մը դադրեցաւ՝

— Չոյի՛,— ձայնեց. եւ երբ Արփենի մօտեցաւ իւր սեւ եւ գանգուր մազերն ուսն ի վայր ընկած, ճերմակ թուշերուն վրայ փափուկ կարմրութիւն մը եկած, եւ աննման աչքերը Տիկնոջ ու պատանւոյն յառեց, ուր յայտնի կ'երեւէր թէ երկիւղը միայն զբարկութիւնը կը սանձեր, Անկելինայ հրամայեց գինի մատռուակել արքայորդւոյն, Արփենի տուաւ դինին եւ քաշուեցաւ, բայց այնպիսի կարմրութիւն մը աւելցաւ իւր երեսներուն վրայ եւ այնպիսի՛ կրակ մը փայլեցաւ աչքերուն մէջ, որ կինը ինք նաեւ զարմացաւ, եւ պատանին էլ զգալով դարձաւ՝

— Յիրաւի, Տիկին, անընկճելի բնութիւն եւ սքանչելի գեղեցկութիւն կ'երեւայ թէ միացեր են այդ ձեր փոքրիկ լեռնցիին մէջ:

— Մէկ-երկու տարիէ ես խօսք կ'ուտամ, որ այդ վայրենի էակը գառան պէս ընտելացեալ ձեզ կ'ընծայեմ:

— Մի թէ այդչափ երկայն ժամանակի կարօտ էք դուք. Տիկին,— ըսաւ երիտասարդը լեզուն քիչ-քիչ ծանրանալով եւ մարմնած աչքերը գոցելով... Երաժշտութիւնը քաղցր օրօրի հնչիւններ կ'արձկեր, երբ պատանին փետրալից բարձերուն մէջ խոր քունի ընկղմեցաւ տակաւ առ տակաւ: